հետ պատահած դէպքերի մասին։ Քաղաքագլխի պաշտօնակատարը ցաւակցութիւն յայտնեց վրաց հոգևորականութեան քաղաքային ինքնավարութեան կողմից։

—Երեկ յունիսի 2-ին Թիֆլիզի դուման (խորհուրդը) լսեց սեմինարիայում և նրա շէնքի առաջ վրաց հոգևորականութեան հետ պատահածների մասին և ի նշան ցաւակցութեան ընդհատեց և փակեց նիստը։

—Յունիսի 1-ին Թիֆլիզում տեղի ունեցաւ Քարթալինիայի և Կախէթի գործակալների ժողովը, որը վճռեց դադարել գործակալական պաշտօն կատարելուց մինչև որ չը պարզեն և արժանաւոր կերպով չը պատժեն նրանց, որոնք առաջ բերին մայիսի 31-ի դէպքը։ Այս վճռի մասին յայտնեցին նաև ս. Էկզարքոսին։ Քարթալինիայի և Կախէթի հոգևորականութեան հետ միացան նաև Բաքուի և Գանձակի նահանգի գործակալները։

Փոխարքայի կողմից մայիսի 31-ի դէպքի քննիչ նշանակուած է գեներալ Ստախովիչ՝ ազնուականութեան կողմից ներկայացուցիչ՝—Ա. Ի. Զամբակուրեան Օրբելեանի, հոգևորականութեան կողմից քահանայից ժողովի նախագահ Քրիստափոր քահանայ Ցիցքիշվիլի և քարտուղար՝ Ալ. Կանչելի։

Թիֆլիզի հայ հոգևորականութիւնը լսելով մայիսի 31-ին վրաց հոգևորականութեան հետ պատահածների մասին, որոշեց ցաւակցութիւն յայտնել առանձին պատգամաւորութեան միջոցաւ։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ամերիկայի միլիոնատէր Ռաքֆէլլերը 200,000 ռուբլի նուիրեց բարեգործական նպատակով։ Բողոքական քարոզիչներից շատերը յանձնաժողով կազմեցին, որպէս զի կարողանային հանրային կարծիք պատրաստել, որ այսուհետև անմաքուր աղբիւրներից բխած դրամը հոգևոր գէպքերի համար նուէր չընդունուի։ Այդ քարոզիչներն ասում են, որ «Ստանդարտ Քարիւղի ընկերութեան» հետևած ուղղութիւնը այդպիսի պայքարի պէտք ունի։ «Քրիստոսի Եկեղեցին փորձութեան մէջ է, ինչպէս և այն բոլոր առևտրական մեծ հարստահարիչները, որոնք Եկեղեցու պաշտպանութեան են ապաւինում»։ Պարզ է, որ քարոզիչների յանձնաժողովը դժուար գործ է սկսել։ Պ. Ռաքֆէլլերը համարեա՝ ամենայն օր առատ դումարներէ նուիրում կրօնական և կրթական նպատակաւ և շատ քչերն են առարկութիւն

անում նրա «աղտոտած դրամն» ընդունելու մասին: Ռաքֆելլերի բաբեկամների կարծիքով «Ստանդարտ Քարիւղի ընկերութեան» ուղղութիւնը նոյն է, ինչ որ ամերիկական ուրիշ ձեռնարկութիւնների և «աղտոտ դրամի» դէմ խաչակրութիւն կազմողները մեծ մասամբ նախանձից և անձնական շահերից դրդուած են այդպէս վարուում: Իսկ վիճաբանութեան առարկայ՝ Քարիւղի ելշան Ռաքֆելլերն այս ժամուս զբաղուած է քաց դաշտում գնդակ խաղալով և ոչ մի կարևորութիւն չի տալիս յարուցած վիճաբանութիւններին: